ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ. ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Լիլիթ Սարգսյան[*]

Տարածքային զարգացման անհամաչափության խնդիրն առկա է աշխարհի բազում երկրներում, որոնք առաջին հերթին բախվում են այդ անհամաչափությունների գնահատման խնդրի հետ: Յուրաքանչյուր երկիր իր տարածքային քաղաքականության շրջանակներում մշակում է անհամաչափությունները բնութագրող չափանիշներ՝ դրանց համարժեք ցուցանիշների ցանկով: Հոդվածում, որպես օրինակ, ներկայացված են լեհական կառավարության՝ տարածքային անհամաչափության գնահատման չափանիշները և ցուցանիշները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երևույթը վերլուծության նախնական փուլում է գտնվում, հոդվածում առաջարկվում է միջմարզային սոցիալ-տնտեսական համաչափության գնահատման չափանիշների և ցուցանիշների ցանկը, ինչպես նաև տարածքային անհամաչափությունների ամփոփ գնահատականը՝ հիմնվելով մարզերի մակարդակով հրապարակվող տեղեկատվության վրա:

Տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունը կարևորագույն հիմնախնդիր է աշխարհի տարբեր երկրների համար: Լինելով բարդ և բազմակողմանի երևույթ՝ այն մինչև օրս

[*] ՀՊՏՀ կառավարման ամբիոնի հայցորդ:

չունի վերջնական սահմանում: Դիտարկենք մասնագիտական գրականության մեջ այդ հասկացությանը տրվող որոշ մեկնաբանումներ.

1. Տարածքային անհամաչափությունն ընդհանուր անհամաչափության դրսևորման ձև է, որն ավելի նշանակալի է դառնում, երբ տարածքային անհամաչափությունը համընկնում է քաղաքական և էթնիկական լարվածության հետ՝ խաթարելով սոցիալական և քաղաքական կայունությունը [1]:
2. Տարածքային անհամաչափությունը տարածքային նշանակության 2 ցուցանիշների՝ բնակչության խտություն և 1 շնչի հաշվով եկամտի մեծություն տարբերակվածությունն է [2]:
3. Տարածքային անհամաչափությունը կենտրոնամետ և կենտրոնախույս ուժերի հակազդեցության արդյունք է [3]:
4. Տարածքային անհամաչափությունը ներկայացնում է ըստ տարածաշրջանների կենսամակարդակի, ռեսուրսների կամ ծառայությունների (օրինակ, բժշկական ծառայություններ կամ բարեկեցության մակարդակ) անհավասար մեծությունները [4]:
5. Տարածքային անհամաչափությունը պետական կառավարման ապակենտրոնացման հետևանք է [5]:
6. Տարածքային անհամաչափությունը տնտեսական, սոցիալական և բնական զարգացման մակարդակներում չհիմնավորված տարածքային տարբերություններն է [6]:

Տարածքային անհամաչափությունները կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից և ասպեկտներից՝ ժամկետայնության, գնահատելիության, տարածականության, վերահսկելիության և այլն: Դրանցից կարևորագույնը, թերևս, տարածքային անհամաչափության գնահատելիությունն է, այսինքն՝ այն ցուցանիշները, որոնցով կարելի է գնահատել դրա չափերը, մասշտաբները: Այդ ցուցանիշները կարող են օբյեկտիվ կամ սուբյեկտիվ բնույթ կրել: Օբյեկտիվ ցուցանիշները

քանակական են և չափելի բնույթ են կրում՝ եկամուտ, առողջապահություն, կրթություն, 1000 բնակչի հաշվով բժիշկների, մեքենաների, հեռուստացույցների, հեռախոսների քանակ: Սուբյեկտիվ ցուցանիշները վերաբերում են կոնկրետ տարածաշրջանին և ներառում են բնապահպանական միջավայրը, բնակչության սոցիալական կարգավիճակը, տվյալ տարածաշրջանի հեղինակությունը/վարկը:

Տարածքային անհամաչափությունների գնահատման չափանիշների և մեխանիզմների ընտրության առջև կանգնած երկրները հաճախ բախվում են տարածքային մակարդակով բավարար տեղեկատվական բազայի, վիճակագրության բացակայությանը (սա հատկապես բնորոշ է փոքր զարգացող տնտեսություն ունեցող երկրներին): Հայաստանն այս տեսանկյունից ևս բացառություն չէ: Այն երկրները, որոնք կուտակել են տարածքային մակարդակով բավարար տվյալների բազա, բախվում են տարածքային անհամաչափությունների գնահատման հաջորդ խումբ խնդիրների հետ, մասնավորապես՝ տնտեսական ճիշտ ցուցանիշի, տարածքային մակարդակի (տարածաշրջանի, համայնքի մակարդակով) և ընդունելի կենտրոնացվածության մակարդակի ընտրություն և այլն:

Տարածքային անհամաչափությունների գնահատումն իրականացվում է հետևյալ քայլերի հաջորդականությամբ. 1) անհամաչափության չափանիշների որոշում, 2) յուրաքանչյուր չափանիշը բնութագրող ցուցանիշների սահմանում, 3) ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրում, 4) այդ ցուցանիշների հիման վրա տարածքային անհամաչափության ամփոփ գնահատականի հաշվարկ [7]:

Տարածքային անհամաչափության գնահատման առաջնային և կարևոր քայլն է համարվում չափանիշների ընտրությունը: Չափանիշներն առանձին երկրներում համընկնում են՝ տարբերվելով միայն դրանք բնութագրող ցուցանիշների ցանկով: Մասնավորապես, օրի-

նակ, լեհական մոդելում, տարածքային անհամաչափությունների չափանիշներն են. 1) տնտեսական կառուցվածքը, 2) նորամուծությունները, 3) բնական միջավայրը, 4) սոցիալական հիմնախնդիրները, 5) աշխատանքային կապիտալը, 6) հասանելիությունը: Ընդ որում, այս չափանիշներից յուրաքանչյուրը բնութագրվում է *Աղյուսակ 1*-ում ներկայացված ցուցանիշների համախմբով [7].

Աղյուսակ 1

Տարածքային սոցիալ-տնտեսական անհամաչափության գնահատման չափանիշները (լեհական մոդել)

Տնտեսական կառուցվածքը		
Ցուցանիշների խումբը	**Նպատակը**	**Ցուցանիշները**
Կապիտալ ներգրավելու հնարավորություն	Բացահայտել զարգացած և դժվարություններ ունեցող տարածաշրջանները, որոնք դժվարանում են օտարերկրյա կապիտալ ներգրավել	1. 1 շնչի հաշվով ՕՈՒՆ-ների մեծությունը 2. ՏԻՄ-երի ներդրումային ծախսերի հարաբերությունը ընդհանուր ծախսերում 3. 1 շնչի հաշվով ռեզիդենտ տնտեսական սուբյեկտների քանակը
Տնտեսական զարգացման մակարդակ	Գնահատել տարածաշրջանների զարգացման մակարդակը	4. 1 շնչի հաշվով ՀՆԱ 5. 1 շնչի հաշվով եկամուտ
Աշխատուժի արդյունավետություն	Բացահայտել աշխատուժի շուկայի ամենաբարձր կամ ամենացածր մակարդակը	6. Գրանցված գործազրկության մակարդակ 7. Տնտեսական ակտիվության մակարդակ
Գյուղատնտեսության արդյունավետությունը և մարքեթինգ	Գյուղատնտեսության զարգացման մակարդակը տարածաշրջաններում	8. 1 հա հաշվով գյուղատնտեսական արտադրանքի մեծությունը 9. 1 աշխատողի հաշվով ավելացված արժեքը գյուղատնտեսության ոլորտում

Տնտեսական արտադրողականություն	Զբոսաշրջության կառավարման մակարդակի գնահատական	10. 1 աշխատողի հաշվով ավելացված արժեք
Զբոսաշրջության զարգացման մակարդակ		11. Տուրիստական հիմնարկներում (հյուրանոցներում) անկողիններ-ի քանակը
Նորամուծություններ		
Նորամուծությունները գիտության մեջ	Ակադեմիական կենտրոններում գիտության զարգացման հնարավորությունների գնահատում	12. 1000 տնտեսապես ակտիվ բնակչության հաշվով R&D-ում ներգրավված անձանց թվաքանակը 13. R&D-ում ներգրավված 1 շնչի հաշվով ընդհանուր ծախսերի մեծությունը
Գործարարության ոլորտում նորամուծությունների մակարդակ	Տարածաշրջանների տնտեսական զարգացման մակարդակի գնահատում	14. Վերջին 3 տարում նորամուծություններ գրանցած ձեռնարկատերերի քանակը
Բնական միջավայր		
Զրօգտագործում		15. Զրահեռացում, կեղտաջրերի հեռացում
Թափոններ		16. Թափոնների քանակ, հեռացում
Բնական միջավայրի պաշտպանության մակարդակ		17. Օրենսդրորեն պաշտպանվող տարածքների մասնաբաժինն ընդհանուր տարածքների մեջ
Սոցիալական հիմնախնդիրներ		
Բնակարանային տնտեսություն	Տարածաշրջանում բնակտնտեսության վիճակի գնահատում	18. 1 շնչի հաշվով օգտագործված բնակելի տարածության մեծությունը

Հանցագործության մակարդակ	Հանցագործության բարձր մակարդակ ունեցող տարածաշրջանների որոշում	19. Ընդհանուր հանցագործությունների թվաքանակում դեռահասների հանցագործության մակարդակը 20. Բացահայտված դեպքերի քանակն ընդհանուր հանցագործությունների թվաքանակում
Ենթակառուցվածքների հասանելիություն	Հիմնական կրթական, մշակութային, առողջապահական հաստատությունների հասանելիության գնահատում	21. Մինչդպրոցական հաստատություններ հաճախող երեխաների քանակը 22. Բնակչության հաշվով գրադարանների քանակը 23. Բնակչության հաշվով ամբուլատոր հաստատությունների քանակը
Աղքատության մակարդակ	Աղքատության բարձր մակարդակ ունեցող տարածաշրջանների որոշում	24. Միջին ամսական աշխատավարձի մեծությունը
Սոցիալական կապիտալ-քաղաքացիական հասարակություն	Տարածաշրջաններում սոցիալական ենթակառուցվածքների առկայություն	25. 1000 բնակչի հաշվով գրանցված ասոցիացիաների քանակը
Աշխատանքային կապիտալ		
Աշխատուժի որակավորում	Աշխատուժի ներկա մակարդակի և պոտենցիալի գնահատում	26. MBA որակավորում ունեցող աշխատողների քանակը
Ժողովրդագրական իրավիճակ	Ժողովրդագրական խնդիրներ ունեցող տարածաշրջանների բացահայտում	27. Բնակչության աճի դինամիկան 28. Սեռատարիքային կազմը

Բնակչության առողջական պատկեր	Առողջապահական խնդիրներ ունեցող տարածաշրջանների բացահայտում	29. 1000 բնակչի հաշվով սրտային հիվանդությունների և քաղցկեղի պատճառով մահվան դեպքերի քանակը 30. Հիվանդ մարդկանց քանակը ընդհանուր բնակչության մեջ
Հասանելիություն		
Ճանապարհների հասանելիություն	Ավտոճանապարհների ցածր հասանելիություն ունեցող տարածաշրջանների որոշում	31. Ավտոտրանսպորտային ճանապարհների վիճակը
Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացածության մակարդակ	Թվային ենթակառուցվածքների հասանելիության խնդիրներ ունեցող տարածաշրջաններ	32. Ինտերնետի հասանելիությունը 1000 բնակչի հաշվով

Աղյուսակից պարզ է դառնում, որ լեհական մոդելում տարածքային անհամաչափության գնահատման յուրաքանչյուր չափանիշ բնութագրվում է ցուցանիշների լայն համախմբով: Սակայն, հաշվի առնելով ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը, Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից մարզերի մակարդակով հրապարակվող տվյալների և ցուցանիշների քանակը (օրինակ, մարզերի մակարդակի ՀՆԱ ցուցանիշի, բիզնեսի ոլորտում նորամուծությունների մարզային տվյալների բացակայություն)՝ առայժմ միջմարզային զարգացման անհամաչափության գնահատման համար այս մոդելը, կարծում ենք, կիրառելի չէ:

Ելնելով ներկայումս ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններից և գերակայություններից՝ միջմարզային անհամաչափությունների վերլուծության համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ չափանիշները.

1. *տնտեսական*,
2. *սոցիալական*,

3. *ենթակառուցվածքների հասանելիության*,
4. *մարզին ներհատուկ* չափանիշներ:

Այս չափանիշներին համարժեք հրապարակվող ցուցանիշները ներկայացված են *Աղյուսակ 2-ում:*

Աղյուսակ 2

ՀՀ-ում տարածքային անհամաչափությունների գնահատման չափանիշները և ցուցանիշները

Տարածքային անհամաչափության գնահատման չափանիշները		Չափանիշների համարժեք ցուցանիշներ
Տնտեսական անհամաչափություն		
1.	արտադրողականություն	• տարածքային ՀՆԱ[1] • բնակչության 1 շնչի հաշվով եկամուտի մեծություն
2.	ճյուղերի արտադրողականություն	• արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, ծառայությունների, առևտրի ցուցանիշներ
3.	ներդրումների աղբյուրներ	• պետբյուջեից մարզերի ֆինանսավորում[2] • միջազգային ֆինանսական կազմակերպություններից հատկացված միջոցներ[3]
4.	աշխատուժ	• տնտեսապես ակտիվ, ոչ ակտիվ բնակչություն, աշխատանքային ռեսուրսների քանակ
Սոցիալական անհամաչափություն		
5.	բնակչության կենսամակարդակ	• միջին ամսական եկամուտ • միջին ամսական աշխատավարձ
6.	սոցիալական ենթակառուցվածքներ	• կրթական հաստատությունների քանակը, երեխաների քանակը, • բժշկական հաստատությունների քանակը, բժիշների քանակը

[1] Մշակված է հեղինակի կողմից՝ «Տարածքային զարգացման հայեցակարգում» ներկայացված մեթոդաբանության հիման վրա:
[2] Հայաստանի Հանրապետության 2010-2012թթ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություններ:
[3] ՀՀ Կենտրոնական բանկի բանբեր, 2011-2012թթ. 3-րդ կիսամյակ:

Տարածքային անհամաչափության գնահատման չափանիշները		Չափանիշների համարժեք ցուցանիշներ
7.	սոցիալական շեղումներ	• գրանցված հանցագործությունների քանակը
Ենթակառուցվածքների հասանելիություն		
8.	ճանապարհային ենթակառուցվածքներ	• միջպետական, հանրապետական, մարզային, համայնքային նշանակության ճանապարհների վիճակը • պետբյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգված ճանապարհներ
9.	ջրամատակարարում և ջրահեռացում	• պետբյուջեի միջոցներով ֆինանսավորված ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրեր
10.	գազամատակարարում	• գազամատակարարում ունեցող տնային տնտեսությունների քանակը[1]
Մարզին ներհատուկ		
11.	Ուրբանիզացման ցուցանիշներ	• Բնակչության խտությունը մարդ/կմ[2] • Քաղաքային բնակչության թվաքանակը
12.	սպառողական ծախսերը 1 շնչի հաշվով	• տնային տնտեսության 1 շնչի հաշվով սպառողական ծախսերի մեծությունը
13.	կենսական և բնական միջավայրը	• մթնոլորտային տեսակարար արտանետումներ
14.	տեխնիկական ենթակառուցվածքները	• կեղտաջրերի հեռացում

Աղյուսակ 2-ում ներկայացված ցուցանիշների ցանկը սպառիչ և վերջնական չէ. միջմարզային անհամաչափությունների հետազոտման և վերլուծության խորացմանը զուգընթաց՝ չափանիշների և դրանց համարժեք ցուցանիշների ցանկը, կարծում ենք, կլրացվի, կընդլայնվի և առավել լիարժեքորեն և բազմակողմանիորեն կներկայացնի դիտարկվող երևույթը:

[1] Մարզային զարգացման ծրագրեր, մարզերի պաշտոնական կայքէջեր:

Տարածքային անհամաչափություն գնահատման տեսանկյունից, կարծում ենք, առավել նպատակահարմար է կիրառել անհամաչափությունը բնութագրող ամփոփ բազմակողմանի ցուցանիշ, որը միաժամանակ կբնութագրի տնտեսական, սոցիալական ենթակառուցվածքների հասանելիության, մարզին ներհատուկ ասպեկտները: Այդ նպատակով անհրաժեշտ է առանձնացնել յուրաքանչյուր չափանիշի մեկական տիպական ցուցանիշ: *Աղյուսակ 3-ում* ներկայացված է տարածքային սոցիալ-տնտեսական անհամաչափության ամփոփ գնահատականը՝ իր բաղադրիչ ցուցանիշներով:

Աղյուսակ 3

ՀՀ մարզերի օրինակով տարածքային անհամաչափության բազմակողմանի գնահատականը

Մարզեր	Տարածքային անհամաչափության ամփոփ գնահատականի բաղադրիչ ցուցանիշները (2011թ.տվյալներով)				Տարածքային անհամաչափության ամփոփ բազմակողմանի գնահատական
	ՀՆԱ (դրամ) մեկ շնչի հաշվով բազմակողմանի գնահատական	Միջին ամսական աշխատավարձ դրամով	Գյուղատնտեսության մեկ շնչի հաշվով համախառն արտադրանքի արժեքը	Սպառողական ծախսերը 1 շնչի հաշվով	
Արագածոտն	908.2	76320	68.219	27460	104756
Արարատ	844.9	88056	12.703	29330	118244
Արմավիր	841.3	95699	12.455	25173	121726
Գեղարքունիք	861.6	88365	38.453	27039	116304
Լոռի	690.8	85004	24.105	27436	113155
Կոտայք	**902.2**	**95682**	**27.212**	**22689**	**119300**
Շիրակ	783.5	81824	37.191	29569	112214
Սյունիք	**1886.2**	**131963**	**68.829**	**31531**	**165449**
Վայոց ձոր	***580.9***	***76614***	***116.825***	***33627***	***110939***
Տավուշ	***669.6***	***78622***	***51.079***	***32022***	***111365***

Այսպիսով, տարածքային անհամաչափության ամփոփ գնահատականը կարող է կիրառվել պետական բյուջեից, ինչպես նաև միջազգային ֆինանսական և դոնոր կազմակերպություններից մարզերին հատկացվող միջոցների մեծության գնահատման համար, մասնավորապես, այդ մոտեցման համաձայն՝ 2011թ. դրությամբ առավելագույն միջոցները պետք է ուղղվեին Տավուշի, Վայոց ձորի մարզերին, նվազագույն միջոցները՝ Սյունիքի և Կոտայքի մարզերին:

Հոկտեմբեր, 2013թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Kanbur R., Venables A.,* Spatial Inequality and Development Overview of UNU-WIDER project, 2005, p. 2.
2. *Folmer H., Oosterhaven J.,* Spatial Inequalities and Regional Development, 1977, p. 1.
3. *Sukko K.,* Spatial inequality and Economic Development: Theories, Facts and Policies 2008, p. 12.
4. http://en.wikipedia.org/wiki/Spatial_inequality
5. *Lessmann Ch.,* Regional Inequality and Decentralization-an empirical analysis, 2011.
6. *Kutscherauer A.,* Regional disparities: Disparities in country regional development-concept, theory, identification and assessment, 2010, p. 7.
7. Ministry of Regional Development, Regional Disparities in Poland, 2009, p. 7.

АНАЛИЗ НЕРАВНОМЕРНОГО ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗВИТИЯ РА: КРИТЕРИИ И СОРАЗМЕРНЫЕ ПОКАЗАТЕЛИ НЕРАВНОМЕРНОГО РАЗВИТИЯ

Лилит Саргсян

Резюме

Проблема неравномерного регионального развития существует во многих странах мира, которые в первую очередь сталкиваются с необходимостью анализа этих различий/асимметрий. Каждая страна разрабатывает собственные параметры, характеризующие диспропорции регионального развития, а также список соответствующих показателей в рамках собственной региональной политики. Данная статья описывает проблему асимметрий регионального развития на примере критериев и показателей, разработанных польским правительством. Учитывая, что анализ этого явления все еще находится в начальной стадии, в статье предлагается перечень параметров и показателей анализа социально-экономического равномерного межрегионального развития на основе информации, доступной на региональном уровне.